## 54. ԸՍՏՈՒԾԱՆԱ ՏՈՒՎԱԾ ԸՌՈՒԶԻՆ...

Մին մարթ ա ինո՛ւմ, մինգյել մին կնեգյ։ Մարթը շատ թամբալ ա ինում, թաքավըրերեն վըրեխճարն ար պահում։ Ամմըեն օր վըրեխճարը տանում ար մին սարավ անում, ինքյը պըռտըլեր հընցնում, քոն ինո՛ւմ։ Վըխճըրնըերան օրը մինը կորչում ար, էտ մարթին հեչ վեջը չար։ Վերչը, վըեր վըխճըրնըերեն շատը կորչում ա, տա մին օր հըտըրնըերան քյինա՛մ ա, տըեսնում մին կըծանում մին փոս, մին քոռ կյո՛ւվ էլ մաշին պըպըղած, կարում չի փոսան տուս կյա՛, լի՛հա վըեր վըեխճարը փոսըեն դըրաղավը օզում ա թա անց կենա, փո՛նում ա, քաշում փոսը, պըճըղում, օտում։ Վըեխճարը հու ա տամ, տանում տամ թաքավըերեն մարթուցը, ինքյը քյինա՛մ տոն, ասում.—Աստուծ ինձ ըռուզի յա տուվալ, էլ կործ չըմ ըննական։ Կնեգյը ճարը կտրած, ամմըեն օր քյինա՛մ ա ծ.՛մակը, մին չելակ չոփ անում պիրո՛ւմ, տանում ծախում, հացու տամ։

Մին օր էլ էտ կնեգյը ծմակումը չոփ ընիլիս մին խըըշենավ ծածկըված փոսում մին կարաս վըեսկե յա քթենո՛ւմ, կյամ մարթին ասում.—Վըեսկե յըմ քթա՛լ, եք քյինա՛նք տո՛նս օնըենքյ։ Մարթը թա՝ կյամ չըմ, իմ ըռուզիս աստուծ տուվալ ա։ Կնեգյը իտի, ամմըեն օր մարթին ասում ա.—Եք քյինա՛նք տո՛նս օնըենքյ, մարթը թա՝ քյինա՛ պենիտ, իմ ըռուզիս աստուծ տուվալ ա։

Կնեգյը ճարը կտրած, քյինա՛մ ա հըրվանըեն կոչտը, ասում.—Ծմակումը մին կարաս վըեսկե յըմ քթա՛լ, եք քյինա՛նք, քյըմա՛գյ ըրա տո՛նս օնըենքյ, ճոթ անըենքյ։ Հըրևանը թա՝ քյինա՛նք։

Քյինձմ ընի Հըրևանը կարասը փոսան տուս ա օնում, մին հափուռ շըպըրտում, տամ էտ կնգանը, մնացածը յոր օնում, տանում տոն։ Էտ կնեգյն էլ ճարը կտրած, հըրվանըեն թող ըրած մին քանի վըեսկեն յոր ա օնում, քյինձմ տոն, մարթին ասում.— Լավ ըրըե՞ր, վըեր եկեր վուչ, հըրևանըտ էս մին քանինը շըպըրտավ ինձիրա, կարասը չիլակեց, տարավ ծըրծնեց տոն։ Մարթը թա՝ պեն օնըես, քյինձ պենիտ, իմ ըռուզիս ասսոած տուվալ ա։

Հըրևանն էլ վըեր կարասը տանում ա տոն, պեց անում, ծըեոքը մըեկնում վըեսկեն տուս օնում, օց ա տըեռնում, վըեր քցում ա կըրասըեն մաչը, վըեսկե յա մնամ։ Քանի հետ ծըեոքը քցում ա վըեսկեն տուս օնում, օց ա տըեռնում։ Տըեսնում ա, վըեր երի-միշ ընըեյլի թահրը չի կա, վըեսկըեն կըրասավը տանում ա էտ կնգանը տանը հօնրթավը վըեր ածում, վըեր օցըեր տըեռնան, բայց տըեռնում չըն։

Մարթը վըեր եշում ա, տըեսնում հօնրթավը վըեսկե յա վըեր տըեռնում, կնգանը թա՝ պա վըեր ասում ըմ իմ ըռուզես ասսուած տուվալ ա՞...